



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«25» հուլիսի 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՁԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթի հաղթողներին հավելավճարի տրամադրման պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆԶԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան _____ 2017 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ **Կոմիտե**), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____-ը,

(գիտական կազմակերպության անվանումը)

ի դեմս տնօրեն/ռեկտոր _____-ի (այսուհետ՝ **Կազմակերպություն**), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ **Կողմեր**), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի հուլիսի 25-ի N 815-Ա/2 հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարին տրամադրման մրցույթի հաղթող(ներ)ին հասանելիք հավելավճարները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինն է՝ (տրամադրվող դրամական միջոցների չափը)

----- ՀՀ դրամ (_____)
(թվերով և բառերով)

ՀՀ դրամ՝ թվով ----- հաղթող(ներ)ին հավելավճար վճարելու նպատակով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Կոմիտեն սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Կազմակերպությանն է տրամադրում 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար, ամսական կտրվածքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կոմիտեն իրավունք ունի.

4.1.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթող(ներ)ին 6 ամսից ավել արտերկիր գործուղվելու դեպքում՝ ընդհատել ֆինանսավորումը.

4.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը:

4.2. Կոմիտեն պարտավոր է.

4.2.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Կազմակերպությանը տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.3. Կազմակերպությունն իրավունք ունի.

4.3.1. Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

4.4. Կազմակերպությունը պարտավոր է.

4.4.1. հավելավճար ստանալու ընթացքում հաղթող(ներ)ին արտերկիր գործուղելու դեպքում ներկայացնել տեղեկանք.

4.4.2. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետներում.

4.4.3. Կոմիտեի պահանջով նրան տրամադրել սույն պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 8.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
ք. Երևան, փ. Օրբելի 22
Հ/հ 900011033033
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Աշխատակազմի ղեկավար՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

_____ Լ. Մարդոյան

Կ.Տ.

Կ.Տ.